

CA $\frac{N}{454}$

06 APR 2010

ՀԱՅ ՀՈՒՍԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՂՈՎՐԻՔԻՆ ԳՈՄԻՏԵՐԻՆՑ
ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ № 2
ԻՆՉՊԵՍ ԱՆՑՆԵԼ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ВИДНОСТНА
ИНСТИТУТА
ИСТОРИЧЕСКОЕ
Академия Наук
СССР

375

2-11

ՊԵՏԶՐԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

Պետերատի տպարան
Գլավլիտ. № 8079(բ)
Հրատ. № 2506
Պատվ. № 534
Տիրութ 1500

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ № 2
ԻՆՉՊԵՍ ԱՆՑՆԵԼ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻՆ

Համկոմկուսի (բ) Կենտկոմը 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման մեջ առաջարկում է «մինչև 1933 թ. հունվարի մեկը վերամշակել տարրական և միջնակարգ դպրոցներն այնպես, վոր ապահովվի գիտությունների հիմունքների, կանոնավոր խոսքի, գրի և մատեմատիկական վարժությունների սխտեմատիկ լուրացումն աշակերտների կողմից և այլն»:

Այդ հիման վրա ՀՍՄՀ Լուստողկոմատը վերամշակել է պոլիտեխնիկական դպրոցի 8 խմբերի բոլոր ծրագրերը, վորոնց վորոշ մասն արդեն լույս է տեսել (հ. լեզու, քիմիա, բնագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն, ռուսաց լեզու, ֆիզկուլտուրա, յերգ-յերաժշտություն, իսկ մնացած մասը շուտով պատրաստ կլինի տպագրության հանձնելու:

Սակայն քանի վեր այդ ծրագրերն ուսուցչական լայն մասսաների քննության առարկա չեն դարձել, ԼժՎ-ի կոլեգիան վորոշեց այդ ծրագրերը հրատարակել, վորպես նախագծեր, վորոնք յենթակա չեն մասնաշաղկան ստուգատեսի, վորից հետո միայն կարող են վերջնական խմբագրությամբ հրապարակվել. իսկ մինչ այդ, մեր դպրոցները սույն տարվա հունվարից ղեկավարվում են այդ նախագծերով:

Այդ նախագծերի հիմքը կազմում են 1932 թ. առարկայական ծրագրերը, վորոնց մասին, ինչպես հայտնի չե, Կենտկոմը նույն վորոշման մեջ արձանագրել է

«մանավանդ առաջին աստիճանի դպրոցների ծրագրերն զգալի չափով բարելավվել են, ավելի չե բարձրացել գիտելիքների ծավալը և ավելի սխառեմատիկ և դարձել ուսումնական նյութի դասավորումը՝ համեմատած նախորդ տարիների ծրագրերի հետ»:

Նույն վորոշման մեջ կենտկոմը միաժամանակ նշում է 1932 թ. ծրագրերի հիմնական թերույթյունները՝ ա) ծրագրերը բեռնավորված են ուսումնական նյութով, վորի պատճառով մի շարք առարկաներ անցվում են հապճեպ, աշակերտները հաստատապես չեն լուրացնում ավանդված գիտելիքները, բ) անբավարար է և նույնիսկ բացակայում է կապն առանձին առարկաների ծրագրերի միջև, գ) մի շարք ծրագրերում կան սկզբունքային սխալներ, դ) անբավարար է պատճառական մոտեցումը հասարակագիտական առարկաներին և այլն:

Կենտկոմի այդ նշումները հիմք են ծառայել նոր նախագծերի մշակման:

Ուսումնական նյութերի բեռնաթափում կատարվել է բոլոր ծրագրերի նկատմամբ մասնավորապես մաթեմատիկայի, ֆիզիկայի, բնագիտության, աշխարհագրության ծրագրերի նկատմամբ:

Մաթեմատիկայի ծրագիրը. բեռնաթափում կատարվել է բոլոր խմբերի, մասնավորապես 3, 4 և 5-րդ խմբերի նկատմամբ: 3-րդ խմբի ծրագրերից հանված է կոտորակների ծանոթությունները. հանված են նաև յերկրաչափական դժվար հասկացողությունները՝ մակերեսների և ծավալի չափումների մասին:

1-ին և 2-րդ խմբերում.

Ուսման տարածքային գործողի սկզբից (հուն-

վարի 15-ից) պետք է անցնել նոր ծրագրերով այն նյութը, վոր նախատեսված է նախագծով յերրորդ քառորդի համար:

3-րդ խումբ. Հին ծրագրով յերրորդ խմբի ուս. տար. 3-րդ քառորդում նախատեսվում էր սկսել տասնորդական կոտորակներից, այնուհետև անցնել հասարակ կոտորակները և այլն: Այդ բոլորը պետք է թողնել ու անցնել այն՝ նոր նախագծով, ինչ վոր նախատեսված է նախագծով 3-րդ խմբի 3-րդ քառորդի համար— գործողությունները 1000-ի սահմանում, տալով աշակերտությանը միանգամայն կայուն ունակություններ 1000-ի շրջանում թվերի հետ գործ ունենալու խընդրում: Նույնը վերաբերում է նաև յերկրաչափական նյութին. պետք է անցնել այն, ինչ նախատեսված է նախագծով 3-րդ քառորդի համար— պարզ մակերեսների չափումները:

4-րդ խումբ. 1932 թ. ծրագրով չորրորդ խմբի 3-րդ քառորդի համար նախատեսվում են գործողություններ տասնորդական և հասարակ կոտորակներով: Անհրաժեշտ թողնել այդ գործողությունները և սկսել նորից տասնորդական կոտորակների սխառեմատիկ և հաստատուն ծանոթությունից, ինչպես նախատեսված է նոր նախագծով:

Նույնը վերաբերում է և յերկրաչափական նյութին — պետք է թողնել ծավալները և անցնել նախագծի 3-րդ քառորդի համար նշած նյութերը:

5-րդ խումբ. 1-ին վեցերյակը (գլուղում 1-ին յոթնորյակ) հատկապես տասնորդական և հասարակ կոտորակներով կատարվող գործողություններին, վորից հետո անհրաժեշտ է անցնել հարաբերություններին և



59582-66

համեմատություններին, գործադրելով կոտորակային
թվերը և գործողությունները 5-րդ խմբում դասըն-
թացը նախկին ծրագրի համեմատությամբ բավականա-
նաչափ բեռնաթափվել է (յերկրաչափական սխեմա-
տիկ նյութերից), ուստի անհրաժեշտ է թվաբանությունն
այդ խմբում հիմնովին ավարտել՝ նոր նախագծերով
նախատեսված սահմաններում: Վորպես դասադիրք
պետք է ոգտադրվել ինչպատրյանի և Սալիբեկյանի
կազմած դասագրքի 5-րդ տարին և Շավարյանի կազ-
մած գրքի 4-րդ տարվա համապատասխան մասը:

Յերկրաչափությունից, լեթե սկսված է թեորեմնե-
րի մասը, պետք է այդ թողնել և կրկնել զննական
յերկրաչափությունը, վոր նախատեսված է նոր նա-
խագծով 5-րդ խմբի համար, իսկ հին ծրագրով 4-րդ
խմբի համար,

Յերկրաչափությունը, կրկնողություն լինելով, քիչ
ժամանակ կխլի. ժամանակի մեծ մասը պետք է հա-
կացնել թվաբանության, վորպեսզի աշակերտները հիմ-
նովին յուրացնեն այդ կարևոր առարկան:

6-րդ խումբ. 6-րդ խմբում պետք է անցնել հատկա-
պես հանրահաշիվ և յերկրաչափություն, սահմանելով
առանձին և կայուն ժամեր այդ առարկաներից յուրա-
քանչյուրի համար:

Նոր նախագծով հանրահաշիվի դասընթացը գրե-
թե նույնն է, ինչ վոր 1933 թ. ծրագրով սահման-
վածը:

Նոր նախագծով յերկրաչափության սխեմատիկ
ուսուցումն սկսվում է 6-րդ խմբից, իսկ 1932 թ. ծրա-
գրով 5-րդ խմբից:

3-րդ քառորդի սկզբում համառոտ կրկնելով գծերի

և անկյունների մասին, պիտի անցնել լեռանկյուննե-
րի ուսուցմանը, տարեվերջին վերջացնելով զուգահեռ
ուղիները և գեոդեզիկ պարզ աշխատանքները: Այդ-
պիսով 1932 թ. ծրագրով 6-րդ խմբի համար նշված
քառանկյունները, շրջանը մասնում են 7-րդ խմբի դա-
սընթացի մեջ:

7-րդ խումբ 7-րդ խմբում նոր նախագծով հանրա-
հաշիվի դասընթացն սկսվում է բազմանդամ արտահայ-
տությունները բազմապատկիչների վերլուծելուց, այն,
ինչ վոր նախատեսված էր 1932 թ. ծրագրով 6-րդ խմբի
համար տարեվերջում: Ուստի 7-րդ խմբում վորոշ կրկ-
նություններից հետո պետք է անցնել արմատ հանել և
ապա վերջացնել քառակուսի հավասարումներով:

Յերկրաչափության բաժանում տարածաչափու-
նը (смереометрия) նոր նախագծով տեղափոխվում է
և 8-րդ խմբի դասընթացը: Այդ հնարավորու-
թյուն կտա ավելի հիմնավոր կերպով անցնելու յերկրաչա-
փության մյուս բաժինները: Հունվարի արձակուրդնե-
րից հետո, մի քանի ժամում ամփոփելով անցած նյու-
թը, պետք է սխեմատիկ կերպով անցնել նախագծով
նախատեսված նյութերը:

8-րդ խումբ. 8-րդ խմբի նախագծի բաժինները
պարզ են, պետք է ղեկավարվել նոր նախագծով և սխե-
մատիկ կերպով շարունակել մաթեմատիկայի դա-
սընթացը:

2| ԼԵԶՈՒ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախագծի առաջարկում համառոտ կերպով դըր-
ված են հին և նոր նախագծի տարբերությունները:
Արձակուրդից հետո 1-ին և 2-րդ խմբերում, համաձայն

նոր նախագծի, շարունակվում է բանավոր խոսքի ու զբաղմունքի խոսքի և ընթերցանության տեխնիկայի դարձացումը: 3-րդ խմբում, յեթե մինչ արդ չեն սկսել, ահաբեկչա և սկսել սխառնատեղի քերականության տարբերք և աշխատել մինչև տարեվերջն ավարտել նախագծով նախատեսված նյութերը:

Նոր նախագծով՝ 4-րդ խմբի քերականության դասընթացը 3-րդ խմբի անմիջական շարունակությունն է կազմում: Յեթե աշակերտները ծանոթ չեն նախագծի 3-րդ խմբի դասընթացին, անհրաժեշտ է ամփոփ կերպով ծանոթացնել այդ նյութին (յեթե զրա համար անգամ 15—20 ուր պահանջվի), վորից հետո շարունակել նորմալ դասընթացը՝ ղեկավարվելով նոր նախագծով: Նույնը վերաբերում է և մյուս խմբերին:

Պետք է անշուղղ ղեկավարվել նախագծի քերականական տերմինոլոգիայով: Այս տեսակետից՝ յեղած դասագրքերը վոր մի ոժանդակություն չեն կարող ցույց տալ, նույնիսկ կարող են քերականական որինակներով և տերմիններով միայն շփոթություն առաջ բերել: Այդ թերությունները կարող են վերացվել նոր տպագրվելիք դասագրքերով: Մինչ այդ պիտի ղեկավարվել նախագծով նախատեսված ձևերով, սահմանումներով և տերմիններով:

3) ԳԻՄԻԱ

Բիմիայի ծրագրում փոփոխությունները չնչին են: Մեծ մասամբ կատարված է նյութերի վերադասավորում՝ առանձին խմբերի դասընթացի ներսում, սակայն այն տարբերություն, վոր 1932 թ. ծրագրով

քիմիան սկսվում էր 5-րդ խմբից, մինչդեռ նոր նախագծով քիմիան սկսվում է 6-րդ խմբից: Այդ համագամքը խոշոր արգելք չի հարուցի հունվարից նոր ծրագրով անցնելու համար, վորովհետև այս ուսման տարվա սկզբից հրահանգված էր՝ քիմիան սկսել 6-րդ խմբից, մնում է հունվարից առաջ անցած նյութը կարճ ժամանակամիջոցում ամփոփել և շարունակել քիմիայի սխառնատեղի դասավանդությունը, համաձայն նոր նախագծի այն հաշվով, վոր տարվա վերջն ավարտի յուրաքանչյուր խմբի համար նոր նախագծով նախատեսված նյութը:

4) ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բնագիտության ծրագրի նախագիծը 32 թ. ծրագրերի համեմատությամբ մեծ փոփոխություններ է կրել: Այդ փոփոխություններն սկսում են 4-րդ խմբից, այն ուղղվածով, վոր ծրագրի բննաթափման պատճառով վորոշ նյութեր հաջորդաբար փոխադրվում են վերին խմբերը: Ծրագրի նոր նախագծի՝ ռիչուես առաջացան կենդանիներն ու մարդը՝ զուլսը 3-րդ խմբի ծրագրից տեղափոխվում է 5-րդ խմբի ծրագրի մեջ: Առանց վորեւե ղեկավարության, 4-րդ խումբը հունվարի կիսից պետք է անցնի նոր նախագծով, հնարավորություն ունենալով ավելի խորացված կերպով մշակելու ամբողջ տարվա դասընթացը:

5-րդ խումբ. 5-րդ խումբը 32 թ. ծրագրով արդեն սկսել է բուսաբանությունը, մինչդեռ 33 թ. նախագծով բուսաբանությունը տարված է 6-րդ խումբ: Հունվարի 2-րդ կիսից 5-րդ խումբն այլևս չի շարունակում բուսաբանությունը. համաձայն նոր նախագծի

անցնում ե անկենդան աշխարհը, վորը 4-րդ խմբի նախկին ծրագրում յեղած նյութի խորացումն է: 3-րդ քառորդից սկսած՝ պետք է անցնել ավելի խորացրած կերպով անկենդան աշխարհը, իսկ վերջին քառորդում «ածուխ», նավթ, ելեկտրականություն, և ինչպես առաջացան կենդանիներն ու մարդը: Իբրև դասագիրք կարող է ծառայել ընկ. Գաբրիելյանի «Անկենդան աշխարհը», իսկ բուսաբանության դասագրքերը պետք է թողնել 6-րդ խմբին:

6-րդ խումբ. 6-րդ խմբի բնագիտության ծրագիրը միանգամայն փոխվում է: Նոր նախագծով նախատեսվում է «Բուսաբանություն» բաժինը, մինչդեռ 32 թ. ծրագրով 6-րդ խումբն այս ուսման տարում սկսել է կենդանիների անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմունքները: Այդ նյութը պետք է թողնել և անցնել «Բուսաբանություն» նյութը, համաձայն նախագծի: Յենթադրում ենք, վոր այդ նյութին տվյալ խումբը պետք է ծանոթ լինի անցյալ ուսումնական տարվա ծրագրով: Ուստի անհրաժեշտ է լերորոգ և 4-րդ քառորդներում վերստին կրկնել նախորդ տարվա դասընթացն՝ ավելի խորացրած կերպով: 6-րդ խմբից հանվում է վերջին՝ «մարդ» բաժինը:

7-րդ խումբ. 7-րդ խմբում նոր նախագծով նախատեսվում է յերկու բաժին՝ կենդանաբանություն և կենդանիների կազմախոսությունը և բնախոսությունը:

1932 թ. ծրագրով 7-րդ խումբն արդեն սկսել է ընդհանուր բիոլոգիան: Արձակուրդից հետո պետք է այդ բաժինը թողնել և սկսել «Կենդանաբանություն» վերնագրով բաժինը, անցնելով այդ մինչև ապրիլ ա-

միսը կամ ապրիլի կեսերը, վորից հետո ավելի խորացրած կերպով անցնել անցյալ տարվա՝ «Կենդանիների կազմախոսությունը և բնախոսությունը» վերնագրով բաժինը, վորը մասամբ կրկնողություն է լինելու: Վորպես դասագիրք պետք է ոգտագործել այս տարվա 6-րդ տարվա դասագրքերը և «Կենդանաբանություն» անունով ձևոնարկը:

8-րդ խումբ. 8-րդ խմբի համար նոր նախագծով նախատեսվում է մի հիմնական բաժին: Այս ուսումնական տարվա սկզբում 8-րդ խմբի համար բնագիտության ծրագրեր չենք ունեցել: Այդ խմբերում անցնում են ընդհանուր բիոլոգիա: Արձակուրդից հետո պետք է թողնել այդ և սկսել մարդու բնախոսությունից, վորը նախատեսված է նոր նախագծի 8-րդ խմբի ծրագրով: Այդ նյութը նույնպես վորոշ չափով ծանոթ պիտի լինի աշակերտներին, վորովհետև նախկին ծրագրերով այդ ղետեղված էր 7-րդ խմբի դասընթացում: Ուստի անհրաժեշտ է այդ նյութը կրկնել և ավելի հիմնական գիտելիքներ տալ՝ լրացնելով և ավատեմի վերածելով արդեն տրված գիտելիքները:

5| ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

3-րդ և 4-րդ խմբերի աշխարհագրության դասընթացը խոշոր փոփոխության չի լենթարկվել: Յուրաքանչյուր խմբի նյութերի դասավորության մեջ կան վորոշ տեղաշարժեր, վորոնք բղխում են նյութը սիստեմատիկ անցնելու պահանջից և չեն խանգարի, վոր դասավանդումը հունվարից նոր ծրագրով լինի:

5-րդ խումբ. 5-րդ խմբի ծրագրի նախագիծը տալիս է լրիվ գաղափար մաթեմատիկական և ֆիզիկա-

կան աշխարհագրության գիտելիքների մասին, ամփոփելով և ամբացնելով աշխարհագրական հասկացողությունները, վերոնք տրված են լեղել 8, 4 և 5-րդ խմբերում, սակայն վերոշ սխառմի վերածած: Նախագծի և 1932 թ. ծրագրերի տարբերությունը չնչին է, ուստի հունվարից պետք է նոր ծրագրով շարունակել նյութը, վերպես գասագիրք կարող է ծառայել Հ. Հովհաննիսյանի «Ֆիզ. աշխարհագր.» ձեռնարկը, վերը շուտով լույս է տեսնելու:

6-րդ լեղ 7-րդ խմբեր. ի ՍՄՀՄ-ի աշխարհագրություն վոր 1932 թ. ծրագրով նախատեսվում էր անցնել մի տարում՝ 6-րդ խմբում նոր նախագծով ի ՍՄՀՄ-ի աշխարհագրությանը հատկացվում է 2 տարի՝ 6-րդ և 7-րդ խմբերում, ըստ վորում 7-րդ խմբում ուսման տարվա 3-րդ և 4-րդ քառորդները հատկացվում են հառկապես Անդրկովկասի աշխարհագրությանը:

6-րդ խմբում ի ՍՄՀՄ-ի աշխարհագրութ. հունվարից շարունակել այն հաշվով, վոր նա շարունակվելու է նաև 7-րդ խմբի 1-ին կիսամյակում:

7-րդ խմբի համար 1932 թ. ծրագրով նախատեսված նյութը՝ «Կապիտ. յերկրները» պետք է թողնել և անցնել նոր նախագծով «Անդրկովկաս»-ը, սկզբում մի թեթև աշխարհ (5-6 ժամ) ձգելով ի ՍՄՀՄ-ի ընդհանուր աշխարհագրության վրա, Անդրկովկասի՝ վորպես ի ՍՄՀՄ-ի մի մասի՝ նշանակութունը գիտակցելու նպատակով:

8-րդ խմբում հունվարի կիսից պետք է սկսել կապիտալիստական յերկրների աշխարհագրությունը, Աշակերտներն այդ նյութին ծանոթ են նախորդ խմբից, ուստի 8-րդ խմբում մինչև տարեվերջ պիտի վերջացնել կապիտալիստ. յերկրների աշխարհագրությունը, ավելի սխառմատիկ և խորացրած ձևով:

6 | Ֆ Ի 2 Ի 4 Ա

Ֆիզիկայի ծրագիրը համեմատաբար ավելի խոշոր փոփոխություններ է կրել, հենց այն հանդամանքը, վոր մինչև հիմա ֆիզիկան ավանդվում էր 5-րդ խմբից, իսկ այժմ սկսվում է 6-րդ խմբից և սխառմատիկ կերպով շարունակվում է մյուս խմբերում, վորոշ դժվարություններ առաջացնելով: 6-րդ խմբը, համաձայն նոր նախագծի, արձակուրդներից հետո ֆիզիկան պետք է սկսի սկզբից, պետք է անցնի ավելի խորացրած կերպով. իրեն դասագիրք կարող է ծառայել 5-րդ խմբի դասագիրքը:

7-րդ խմբ. 7-րդ խմբում 32 թ. ծրագրերով նախատեսվում էլին լույս և ելեկտրականություն բաժինները: Արձակուրդից հետո պետք է թողնել այդ և անցնել նոր նախագծով 7-րդ խմբի համար նախատեսված բաժինը: Նյութը մասամբ ծանոթ է աշակերտությանը: Ահրաժեշտ է ուս. տ. 3-րդ և 4-րդ քառորդում հիմնովին անցնել այդ նյութը, միանգամայն ապահովելով ֆիզիկական գիտելիքների յուրացումը՝ նախագծով սահմանված ծավալով:

8-րդ խմբ. 8-րդ խմբում պետք է անցնել լույս և ելեկտրականություն բաժինները, Այդ նյութերը 32 թ. ծրագրով նախատեսված էլին 7-րդ խմբի համար, ուստի աշակերտներն այդ նյութերին նույնպես ծանոթ են: Ահրաժեշտ է նույնն անցնել, սակայն ավելի խորացրած կերպով:

7) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

Պատմութեան դասընթացն սկսվում է 5-րդ խմբից: Այդ առարկային հատկացված են բավականաչափ ժամեր, նկատի ունենալով այն, Վոր առաջին կիսամյակում այդ խումբը պատմութեան չի տնցել: Ներկայումս Հայաստանի պատմութեան ծրագիրը, դասագիրքը և համապատասխան դասառուներ չլինելու պատճառով Հայաստանի պատմութեան հատկացված ժամերը պետք է տալ նույնպես ընդհանուր պատմութեանը: Այդ հնարավորութիւնն կտա սխտեմատիկ և հաստատուն կերպով անցնելու այդ առարկան:

Յուրաքանչյուր խումբը պատմութեանից պետք է անցնի այն, ինչ Վոր նախատեսված է նախագծով: Սակայն 6-րդ և բարձր խմբերում, մինչև տվյալ խմբի համար նախատեսված դասընթացն սկսելը, անհրաժեշտ է առաջին ամիսը հատկացնել նախորդ խմբերի դասընթացի շատ համառոտ ծանոթութեանը, հետո անցնել տվյալ խմբի սխտեմատիկ դասընթացին — համաձայն նախագծի:

8. ՊՈԼԻՏԵՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔ.

Պոլիտեխնիկ աշխատանքը նոր ծրագրերով սկսվում է ա. խմբից և շարունակվում է բոլոր խմբերում: Մինչև 4-րդ խումբը քաղաքի և գյուղի դպրոցներն առնելու յնն մի ընդհանուր ծրագիր, իսկ վերին խմբերի

համար պոլիտեխնիկ աշխատանքի ծրագրի առանձին վարիանտներով — գյուղական դպրոցների² համար առանձին, քաղաքի դպրոցների համար՝ առանձին:

Գյուղական դպրոցներում (կոլլեբրիտներում) գյուղատնտեսութիւնն՝ ուսումնական պլանում չի դրված վորպես առանձին առարկա: Գյուղատնտեսական գիտելիքները և գործնական աշխատանքները մտնում են կոլլեբրիտ դպրոցների պոլիտեխնիկ աշխատանքի ծրագրի մեջ, վորտեղ կլինի գյուղատնտեսութեան թե անսական և թե գործնական մասը: Կոլլեբրիտ դպրոցում գյուղատնտեսութեանը տրամադրվում են 5, 6, 7 և 8-րդ խմբերի պոլիտեխնիկ աշխատանքի ժամերի վոչ պակաս քան 50%-ը:

ՀՍԽՀ. ԼՈՒՍԺՈՂՎՈՄԱՏ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՏԱԿԱՆ ՍԵՆՏՈՐ



<< Ազգային գրադարան



NL0226438

15 4.

53 741

CA 454

807

631

807 D

26/12. 807. 807. 807. 807.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТРОИТЕЛЬСТВА
Академии Наук
СССР

